# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈՒԶԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

**ՎԼԱԴԻՄԻՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**
*Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ, ՀՀ, Երևան*
*Էլ. հասցե՝ vskarapetyan@mail.ru*

**ՄԱՐԻԱՆՆԱ ԱՄԻՐԱՂՅԱՆ**
*Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ, ՀՀ, Երևան*
*Էլ. հասցե՝ amiraghyan.80@mail.ru*

***DOI: 10.24234/scientific.v1i51.303***

**ԱՄՓՈՓՈՒՄ**

Հոդվածում քննարկվում է տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների դերը նախադպրոցական տարիքի երեխաների սոցիալ-հուզական զարգացման գործում: Նախադպրոցական տարիքը համարվում է սոցիալ-հուզական զարգացման զգայուն փուլ, որի ընթացքում ձևավորվում են ինքնագիտակցությունը, ինքնակարգավորման մեխանիզմները, ապրումակցումը, սոցիալական փոխազդեցության հմտությունները, հաղորդակցական կարողությունները: Հետևապես, այս համատեքստում արդիական է դառնում ՏՀՏ-ների ազդեցության ուսումնասիրությունը երեխայի սոցիալ-հուզական զարգացման գործընթացի վրա:

Հոդվածի նպատակն է վերլուծել տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) ազդեցությունը նախադպրոցական տարիքի երեխաների սոցիալ-հուզական զարգացման վրա: Հետազոտության ընթացքում կիրառվել են տեսական և էմպիրիկ մեթոդներ: Տեսական մակարդակում իրականացվել է հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականության վերլուծություն, Էմպիրիկ մասում օգտագործվել են դիտման, զրույցի, փորձարարության մեթոդները, որոնք թույլ են տվել վերլուծել ՏՀՏ-ների ազդեցությունը նախադպրոցական տարիքի երեխաների սոցիալ-հուզական զարգացման վրա: Հետազոտության հիմնական արդյունքները ցույց են տալիս, որ ՏՀՏ-ների նպատակաուղղված, չափավոր և մանկավարժորեն վերահսկվող կիրառումը նպաստում է նախադպրոցական տարիքի երեխաների սոցիալ-հուզական զարգացմանը, հույզերի դրսևորմանը, հաղորդակցական ակտիվությանը, սոցիալական փոխազդեցության հմտությունների զարգացմանը: Միևնույն ժամանակ բացահայտվել է,

որ չկառավարվող և չափազանցված էկրանային միջավայրն ունի սոցիալ-հուզական զարգացման խաթարման ռիսկեր։

**Հիմնաբառեր՝** տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ, սոցիալ-հուզական զարգացում, նախադպրոցական տարիք, հուզական դրսևորումներ, սոցիալական փոխազդեցություն, հաղորդակցական հմտություններ, թվային միջավայր։

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տարիներ շարունակ նախադպրոցական կրթության համակարգում առավել կարևորվում էր երեխաների իմացական զարգացումը՝ ուղղված հիմնականում գիտելիքների ձևավորմանը։ Նախադպրոցականի սոցիալական զարգացման գործընթացը, բավականաչափ հետազոտված լինելով խորդհրդային հոգեբանության և մանկավարժության ներկայացուցիչների (Божович, 1995, Лисина, 1986) կողմից, դիտարկվում էր որպես երեխաների համակողմանի զարգացման ու դաստիարակության արդյունք և դուրս էր մնացել մանկավարժական հատուկ ներգործության դաշտից։ Նախադպրոցականի սոցիալ-հուզական զարգացման խնդիրները չէին առանձնացվում և առանձնահատուկ տեղ չէին գտնում նախադպրոցական կրթական ծրագրերում։ Ժամանակակից նախադպրոցական մանկավարժությունն առանձնահատուկ կարևորում է երեխայի սոցիալական հասունացման, հուզական զարգացման հիմնախնդիրը, համարելով այն գերակա և չափազանց կարևոր։ Վերջինիս վկայությունը նաև այն է, որ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչում որպես զարգացման առանձին ոլորտ ներկայացված է սոցիալ-անձնային, հուզական ոլորտը և դրանով պայմանավորված վերջնարդյունքները (Չափորոշիչ, 2021)։

Առհասարակ, սոցիալական զարգացումը սոցիալական փորձի ձեռքբերման գործընթաց է։ Այն նպաստում է երեխայի կողմնորոշմանը հասարակական կյանքի և հարաբերությունների բարդ համակարգում, ինքնահաստատմանն ու ինքնիրացմանը հասակակիցների միջավայրում՝ ձևավորելով որոշակի դիրքորոշում արտաքին աշխարհի հանդեպ, նպաստելով անձնային զարգացմանը (Выготский, 1983)։ Սոցիալական զարգացման արդյունքում ձեռքբերվող անձի հատկությունները, այն է՝ ազատ ընտրություն կատարելու և պատասխանատու որոշումներ կայացնելու, հաղորդակցվելու և համագործակցելու, արձագանքելու և կարեկցելու, փոխօգնության և փոխզիջման կարողությունները, հանդուրժողականությունը, նպաստում են սոցիալական հմտությունների ձևավորմանը, որոնք դարձնում են անձին վստահ և մտահաս (Nikolayev, 2016)։

Սակայն այսօրվա մարտահրավերներով պայմանավորված սոցիալ-անձնային զարգացման գործընթացը ձեռք է բերում նոր երանգ։ Ներկայումս տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաները զգալի տեղ են զբաղեցնում ոչ միայն մեծահասակների, այլ նաև նախադպրոցական տարիքի երեխաների կյանքում և անմիջականորեն ազդում են նրանց սոցիալ-հուզական ոլորտի զարգացման վրա։ Ժամանակակից երեխան վաղ տարիքից ներգրավվում է թվային միջավայրում՝ օգտագործելով սմարթֆոններ, պլանշետներ, համակարգիչներ և տարբեր էլեկտրոնային խաղեր, որոնք դառնում են նրա առօրյայի անբաժանելի մասը։ Նման իրավիճակով պայմանավորված էական է դառնում մեծի վերահսկող դերը նախադպրոցականների կողմից տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման գործում (Nikolayev, et al., 2016)։ Տեղեկատվական տեխնոլոգիաների նպատակամետ կիրառումը կարող է հանդիսանալ արդյունավետ կրթական գործիք՝ նպաստելով երեխաների ճանաչողական ակտիվության բարձրացմանը, հույզերի արտահայտման նոր ձևերի ձևավորմանը, սոցիալական փորձի, հաղորդակցական հմտությունների զարգացմանը։ Միևնույն ժամանակ, տեղեկատվական տեխնոլոգիաների չկարգավորված կամ չափից ավելի օգտագործումը կարող է ունենալ նաև բացասական հետևանքներ՝ սահմանափակելով կենդանի շփումը, նվազեցնելով ապրումակցման դրսևորումները, ինչպես նաև դժվարացնելով սոցիալական հմտությունների ձևավորումը։ Երեխան կարող է ավելի քիչ մասնակցել համատեղ խաղերին, դժվարանալ ճանաչել և կառավարել սեփական հույզերը կամ ընկալել մյուսների զգացմունքները։ Այստեղից էլ, կարևոր է ապահովել տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների նպատակային, վերահսկվող և մանկավարժորեն հիմնավորված կիրառումը նախադպրոցական տարիքում՝ համադրելով դրանք կենդանի հաղորդակցության, համատեղ գործունեության և խաղի հետ, որպեսզի ապահովվի երեխաների սոցիալ-հուզական լիարժեք և ներդաշնակ զարգացումը։

## ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հիմնախնդրի շրջանակներում իրականացվել է փորձարարություն՝ պարզելու, թե ՏՀՏ-ի նպատակային կիրառումն ինչ ազդեցություն է ունենում նախադպրոցական տարիքի երեխաների սոցիալ-հուզական զարգացման վրա։ Փորձարարության համար ընտրվել է ավագ նախադպրոցական տարիքի թվով 33 երեխա, որոնց հետ իրականացվել են նպատակային աշխատանքներ՝ ՏՀՏ-ի կիրառմամբ։ Բացահայտվել են նաև փորձարարական խմբի թվով 33 ավագ նախադպրոցականի սոցիալ-հուզական ոլորտի զարգացածության նախնական և վերջնական մակարդակները «Գնացք» (Ս.Վ. Վելիևա)

և «Նկարի պատմություն» (Ի. Բ. Դերմանովա) հայտորոշիչ մեթոդիկաների միջոցով: Ձեռք բերված տվյալների վերլուծությունը ներկայացված է հոդվածի քննարկման բաժնում:

Երեխաների հետ կազմակերպված աշխատանքների ընթացքում կիրառել ենք աուդիոհեքիաթներ, մուլտֆիլմեր, սահիկաշարեր և էլեկտրոնային խաղեր: Աշխատանքի ընթացքում պայպանել ենք հետևյալ սկզբունքները՝ 1)տարիքային և հոգեբանական առանձնահատկությունների համապատասխանություն կազմակերպվող աշխատանքներին և ՏՀՏ միջոցների ընտրության, 2)անվտանգ և աջակցող միջավայրի ապահովում, 3)երեխաների ակտիվ մասնակցության խրախուսում, 4)հաջորդական և համակարգված աշխատանքի կազմակերպում: Փորձարարության ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվել սոցիալ-հուզական զարգացման այն բաղադրիչներին, որոնք ամրագրված են հայտորոշիչ մեթոդիկաներով՝ 1)հույզերի ճանաչում և անվանում, 2)հույզերի արտահայտում սոցիալապես ընդունելի ձևերով, 3)ինքնակարգավորման տարրերի ձևավորում, 4)համագործակցային և հաղորդակցական հմտությունների զարգացում, 5)ապրումակցման/էմպատիայի ձևավորում:

## ՔՆՆԱՐԿՈՒՄ

Փորձարարական խմբից ձեռք բերված նախնական արդյունքները ներկայացրել ենք աղյուսակի տեսքով՝ ըստ երեխաների թվի և տոկոսային հարաբերության (Աղյուսակ 1.).

**Աղյուսակ 1.**

**Փորձարարական խմբի երեխաների սոցիալ-հուզական զարգացման նախնական մակարդակը.**

| Մեթոդիկաներ | Մակարդակներ n = 33 | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| «Գնացք» (Վելիևա Ս.Վ.) | ցածր մակարդակ | | միջին մակարդակ | | բարձր մակարդակ | |
| | n | % | n | % | n | % |
| | 6 | 18 | 10 | 30 | 17 | 52 |
| «Նկարի պատմություն» | ցածր մակարդակ | | միջին մակարդակ | | բարձր մակարդակ | |
| | n | % | n | % | n | % |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| (Դերմանով<br>ա Ի.Բ.) | 16 | 9 | 1<br>1 | 3<br>3 | 6 | 8 |

Երկու մեթոդիկայից ձեռք բերված արդյունքների միջին թվաբանական արժեքից ակնհայտ է դառնում, որ երկու մեթոդիկաների արդյունքում փորձարարական խմբի երեխաների սոցիալ-հուզական զարգացման ցածր մակարդակը կազմել է 51% (17 երեխա), միջին մակարդակը՝ 31% (10 երեխա), իսկ բարձր մակարդակը՝ 18% (6 երեխա)։

Ներկայացված են նաև փորձարարական խմբի սոցիալ-հուզական զարգացածության վերջնական արդյունքները, որոնք ձեռք ենք բերել նպատակային աշխատանքներ կազմակերպելուց հետո (Աղյուսակ 2).

**Աղյուսակ 2.**

**Փորձարարական խմբի երեխաների սոցիալ-հուզական զարգացման վերջնական արդյունքները.**

| Մեթոդիկաներ | Մակարդակներ<br>n=33 | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| «Գնացք» (Վելիևա Ս. Վ) | ցածր մակարդակ | | միջին մակարդակ | | բարձր մակարդակ | |
| | n | % | n | % | n | % |
| | 16 | 49 | 9 | 27 | 8 | 24 |
| «Նկարի պատմություն» (Դերմանովա Ի. Բ) | ցածր մակարդակ | | միջին մակարդակ | | բարձր մակարդակ | |
| | n | % | n | % | n | % |
| | 6 | 18 | 8 | 24 | 19 | 58 |

Փորձարարության ավարտին ստացված տվյալների համեմատական վերլուծությունը ցույց տվեց հուզական լարվածության մակարդակի նվազման և դրական հույզերի դրսևորման աճի միտում։ Ինչպես ակնհայտ է արդյունքներից, բավականաչափ կրճատվել է ցածր մակարդակը և աճ է գրանցվել բարձր մակարդակում՝ այն հասնելով 53% (18 երեխա)։ Ստացված արդյունքները վկայում են, որ իրականացված աշխատանքները դրական ազդեցություն են ունեցել երեխաների սոցիալ-հուզական զարգացման վրա, քանի որ խմբի մեծամասնությունն ապահովել է բարձր մակարդակ։

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հիմնախնդրի վերաբերյալ կատարված ուսումնասիրությունների արդյունքում կարող ենք նշել, որ՝

- սոցիալ-հուզական զարգացումը յուրաքանչյուր երեխայի անհատական զարգացման կարևոր մաս է կազմում: Այն բազմաբաղադրիչ և դինամիկ գործընթաց է, որը ներառում է հուզական ինքնագիտակցությունը, ինքնակարգավորումը, ապրումակցումը, սոցիալական փոխազդեցության և հաղորդակցական հմտությունները: Այն ձևավորվում է սոցիալական միջավայրի, փոխազդեցությունների և նպատակային մանկավարժական ազդեցությունների արդյունքում: Հետևաբար, սոցիալ-հուզական զարգացումը չի ընթանում ինքնաբուխ, այլ պահանջում է համակարգված և նպատակային մանկավարժական աշխատանք,
- նախադպրոցական տարիքը երեխայի սոցիալ-հուզական զարգացման համար կարևոր շրջան է, երբ ձևավորվում են երեխայի անձնային հատկանիշները, սոցիալական հմտությունները: Երեխայի սոցիալ-հուզական զարգացումը դրսևորվում է զգացմունքների ճանաչման, կարեկցանքի, համագործակցության, սոցիալական նորմերի յուրացման միջոցով, որտեղ կարևոր է մեծահասակի աջակցող դերը և այդ ուղղությամբ նպատակային աշխատանքների կազմակերպումը,
- տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաները կարող են հանդիսանալ արդյունավետ կրթական միջոցներ, եթե կիրառվեն նպատակային, չափավոր և մանկավարժի կողմից վերահսկվող ձևով: Դրանք ընդլայնում են ուսումնադաստիարակչական միջավայրի հնարավորությունները, բարձրացնում երեխաների մոտիվացիան, խթանում հուզական ներգրավվածությունը և ապահովում ինտերակտիվ փոխգործակցություն,
- փորձարարական հետազոտության արդյունքների վերլուծությամբ հիմնավորվում է ՏՀՏ-ների դրական ազդեցությունը նախադպրոցական տարիքի երեխաների սոցիալ-հուզական զարգացման վրա՝ վերջիններիս նպատակային կիրառուման պարագայում, երբ այն նպաստում է երեխաների հուզական ինքնակարգավորմանը, հաղորդակցական ակտիվությանը, ապրումակցմանը և սոցիալական փոխազդեցության հմտությունների զարգացմանը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

*ՀՀ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ* (2021). ԿԳՄՄՆ, Երևան.

**Божович, Л. И**. (1995). *Личность и её формирование в детском возрасте*. Москва: Педагогика.

**Выготский, Л. С**. (1983). *Собрание сочинений* (Т. 3). Москва: Педагогика.

**Леонтьев, А. Н**. (1977). *Деятельность. Сознание. Личность*. Москва: Политиздат.

**Лисина, М. И**. (1986). *Проблемы онтогенеза общения*. Москва: Педагогика.

**Elias, M. J**. (2014). The future of character education and social-emotional learning: The role of educators. *Journal of Character Education, 10*(1), 1–20.

**Nikolayev, M., Clark, K., & Reich, M. S**. (2016). Social-emotional learning opportunities in online games for preschoolers. In *Emotions, Technology, and Digital Games* (pp. 211–229).

**Young, K. S**. (1999). Internet addiction: Evaluation and treatment. *British Medical Journal, 7*, 351–352.

## REFERENCE LIST

*Gosudarstvennyj obrazovatel'nyj standart doshkol'nogo obrazovaniya Respubliki Armeniya (State Educational Standard of Preschool Education)* (2021). Ministerstvo obrazovaniya, nauki, kul'tury i sporta RA, Erevan

**Bozhovich, L. I.** (1995). Lichnost' i eyo formirovanie v detskom vozraste *(Personality and its formation in childhood)*. Moskva: Pedagogika.

**Vygotskij, L. S**. (1983). Sobranie sochinenij *(Collection Work).* (T. 3). Moskva: Pedagogika.

**Leont'ev, A. N.** (1977). Deyatel'nost'. Soznanie. Lichnost'. *(Activity, Consciousness, Personality).* Moskva: Politizdat.

**Lisina, M. I**. (1986). Problemy ontogeneza obshcheniya *(The Issue of Communication in Ontogenesis)*. Moskva: Pedagogika.

**Elias, M. J**. (2014). The future of character education and social-emotional learning: The role of educators. *Journal of Character Education, 10*(1), 1–20.

**Nikolayev, M., Clark, K., & Reich, M. S**. (2016). Social-emotional learning opportunities in online games for preschoolers. In *Emotions, Technology, and Digital Games* (pp. 211–229).

**Young, K. S**. (1999). Internet addiction: Evaluation and treatment. *British Medical Journal, 7*, 351–352.

SUMMARY

INFORMATION AND COMMUNICATION TECHNOLOGIES IN THE PROCESS OF PRESCHOOLERS' SOCIAL-EMOTIONAL DEVELOPMENT

**Vladimir Karapetyan, Marianna Amiraghyan**

The article examines the role of information and communication technologies (ICT) in the social-emotional development of preschoolers. Preschool age is widely recognized as a sensitive period during which key competencies such as self-awareness, self-regulation, empathy, social interaction, and communication skills are formed. In this regard, investigating the impact of ICT on children's social-emotional development is of particular importance. The study aims to analyze the influence of ICT on the social-emotional development of preschool children. A combination of theoretical and empirical methods was employed. The theoretical component included a review and analysis of relevant scholarly literature, while the empirical component relied on observation, interviews, and experimental methods to assess the effects of ICT use.

The findings suggest that the purposeful, moderate, and pedagogically guided use of ICT positively contributes to children's social-emotional development, including emotional expression, communication activity, and social interaction skills. However, the study also indicates that excessive and unregulated exposure to screen-based environments may pose risks to social-emotional development.

***Keywords:*** *information and communication technologies (ICT), social-emotional development, preschool children, emotional expression, social interaction, communication skills, digital environment.*

РЕЗЮМЕ

ИНФОРМАЦИОННО-КОММУНИКАЦИОННЫЕ ТЕХНОЛОГИИ В ПРОЦЕССЕ СОЦИАЛЬНО-ЭМОЦИОНАЛЬНОГО РАЗВИТИЯ ДОШКОЛЬНИКОВ

**Владимир Карапетян, Марианна Амирагян**

В статье рассматривается роль информационно-коммуникационных технологий (ИКТ) в социально-эмоциональном развитии дошкольников. Дошкольный возраст широко признаётся сенситивным периодом, в течение которого формируются ключевые компетенции, такие как самосознание, саморегуляция, эмпатия, навыки социального взаимодействия и коммуникативные умения. В этой связи изучение влияния ИКТ на социально-эмоциональное развитие детей приобретает особую значимость.

Цель исследования заключается в анализе влияния ИКТ на социально-эмоциональное развитие детей дошкольного возраста. В работе использован комплекс теоретических и эмпирических методов. Теоретическая часть включает обзор и анализ соответствующей научной литературы, тогда как эмпирическая часть основана на применении методов наблюдения, беседы и эксперимента для оценки влияния использования ИКТ. Результаты исследования свидетельствуют о том, что целенаправленное, умеренное и педагогически организованное использование ИКТ положительно влияет на социально-эмоциональное развитие детей, включая проявление эмоций, коммуникативную активность и развитие навыков социального взаимодействия. Вместе с тем установлено, что чрезмерное и неконтролируемое пребывание в экранной среде может нести риски для социально-эмоционального развития.

***Ключевые слова:*** *информационно-коммуникационные технологии (ИКТ), социально-эмоциональное развитие, дошкольный возраст, эмоциональные проявления, социальное взаимодействие, коммуникативные навыки, цифровая среда.*

*Հոդվածը ստացվել է՝ 22.01. 2026*
*Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 29.01. 2026*
*Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 14.03.2026*